

2014 թ.-ի մայիս-հունիս ամիսների ընթացքում, ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի գործունեության պլանի համաձայն

Տպագրվել է գիտական հոդված “Горнорудная промышленность Республики Армения и проблемы, связанные с ее отходами” թեմայով ՌԴ, ք. Մոսկվայում ս.թ. մայիսի 15-ին կայացած միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածույում (“Науки о Земле на современном этапе”: Сборник материалов XII международной научно-практической конференции, Москва, 2014 г., № 12):

Փորձագետների հետ միասին կենտրոնում <<ՀՀ մետաղական օգտակար հանածոների պոչամբարների շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգների նվազեցմանն ուղղված պահանջների և խնդիրների վերհանումը>> թեմայով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Խմբավորվել են ըստ հետևանքների բարդության աստիճանի պոչամբարների հետ կապված վթարները և նրանցում տեղի ունեցող վտանգավոր պրոցեսները, պարզաբանվել են հիմնական պատճառները, որոշվել է յուրաքանչյուրի հետ կապված խնդիրների և նրանց կանխարգելման միջոցառումների շրջանակը:
- Շարունակվել են պոչամբարների կառուցման համար ինժեներաերկրաբանական պահանջների միջազգային մոտեցումների ուսումնասիրումն ու նյութերի հավաքագրումը՝ կապված հատկապես պոչամբարների ամբարտակների և հատակների կառուցմանը ներկայացվող նորմատիվների հետ:
- Հաջորդ կարևոր հարցը՝ կապված պոչամբարների, որպես հատուկ հիդրոտեխնիկական կառույցների հետ, վերաբերվում էր պոչամբարների վիճակի կայունության գնահատման համար անհրաժեշտ մոնիթորինգի իրականացման խնդիրներին: Այդ նպատակով սկսվել է պոչատարների վիճակի վերաբերյալ եղած նյութերի հավաքագրումը և նախնական մշակումը: Ուշադրության կենտրոնում են նաև մի քանի տասնամյակ առաջ կառուցված և դեռևս շահագործվող պոչամբարների նախագծերի վերաբերյալ սակավաթիվ տեղեկատվությունը՝ նրանց վիճակի գնահատման և հնարավոր թերությունների շտկման համար միջոցառումների շրջանակի մշակման նպատակով:
- Պոչամբարների տարածքի սեյսմիկ վտանգի և հնարավոր սեյսմիկ ազդեցության գնահատմանն ուղղված միջոցառումների ցանկի որոշման նպատակով պարզաբանվել են առկա մոտեցումները: Վերջիններս վերաբերվում են սեյսմիկ միկրոշրջանացման իրականացմանը՝ լոկալ սեյսմոլոգիական հետազոտություններին այն տարածքներում, որոնք ընդգրկում են պոչամբարների շրջակայքը 5-10 կմ շառավղով: Ուսումնասիրությունների այս մակարդակում հետազոտությունները պետք է հանգեն պոչամբարների հարթակների գրունտների առանձնահատկությունների բացահայտմանը և գրունտների հնարավոր

սեյսմիկ արձագանքի քանակական գնահատմանը, նպատակ ունենալով որոշել սեյսմիկ ազդեցության ցուցանիշները:

- Մշակվել է պոչամբարների ռեսուրսային ներուժի գնահատման համար անհրաժեշտ երկրաբանահետախուզական աշխատանքների համալիրը, մասնավորապես հետախուզական ցանցի անհրաժեշտ խտությունը, քիմիական փորձարկումների տեսակները, ներուժի տնտեսագիտական գնահատման հիմնական ցուցանիշները:
- Մշակվել են տեխնաժին առաջացումների կադաստրային անձնագրի կառուցվածքն ու բովանդակությունը: Կատարվել է պոչամբարների ռեկուլտիվացիայի և կոնսերվացման առաջնահերթ պահանջների արտասահմանյան լավագույն փորձի ուսումնասիրում, հավաքագրում և վերլուծություն՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան ձև և ներդնելու այն ՀՀ-ում:

Աշխատանքը կատարված է ԵՊՀ Կայուն Ջարգացման Կենտրոնի կողմից, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

«ԿԶԿ»-ի ղեկավար
Երկրաբանա-հանքաբանական գ. թ.

Ռ. Մովսեսյան